ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«21» «Օգոստոս» 2026 թվական № 276-Ա

2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել.

1) 2026-2027 թվականների որսի կենդանիների ցանկը, դրանց օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները՝ համաձայն հավելվածի,

2) 2026-2027 թվականների որսաշրջանի ընթացքում սույն հրամանի հավելվածով սահմանված կենդանատեսակների համար որսի թույլտվություն ունեցող անձինք կարող են իրականացնել մոխրագույն ագռավի, կաչաղակի և շնագայլի անսահմանափակ որս,

3) 2026-2027 թվականների որսաշրջանի ընթացքում սույն հրամանի հավելվածով սահմանված կենդանատեսակների համար որսի թույլտվություն ունեցող անձինք կարող են իրականացնել գայլի մեկ առանձնյակի որս:

2. Որս իրականացնել՝

1) 2026 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 18-ը ներառյալ՝ բացառապես չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով սահմանված տոների և հիշատակի օրերին,

2) 2026 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2027 թվականի փետրվարի 21-ը՝ բացառապես հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով սահմանված տոների և հիշատակի օրերին:

3. 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ՝ որսի իրականացումն ամբողջությամբ արգելվում է:

4. Շրջակա միջավայրի նախարարության կենսառեսուրսների կառավարման վարչության պետին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N1429-Ն որոշման, կազմակերպել կենդանական աշխարհի օբյեկտների՝ սոցիալական նպատակով օգտագործման մասին պայմանագրերի կնքումը:

5. Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-նախարարի մամուլի քարտուղարին՝ ապահովել սույն հրամանի լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

8/21/2026

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան

Հավելված

Շրջակա միջավայրի նախարարի

2026 թվականի օգոստոսի 21 - ի

N 276 - Ն հրամանի

ՑԱՆԿ

2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

Հ/Հ	ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1.	Լոր	2026 թվականի օգոստոսի 29-ից մինչև հոկտեմբերի 18-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 98900 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 10 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
2.	Քարակաքավ	2026 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև դեկտեմբերի 27-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 13750 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 3 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
3.	Թխակապույտ աղավնի	2026 թվականի օգոստոսի 29-ից մինչև դեկտեմբերի 6-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 42900 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 4 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
4.	Անտառային աղավնի	2026 թվականի օգոստոսի 29-ից մինչև դեկտեմբերի 6-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր

		քանակությունը՝ 1600 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
5.	Կոնչան բադ	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2027 թվականի փետրվարի 21-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 25000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 2 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
6.	Սուլող մրտիմն	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2027 թվականի փետրվարի 21-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 7000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
7.	Սև փարփար	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2027 թվականի փետրվարի 21-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 31000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 3 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
8.	Եղեգնահավ	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2027 թվականի փետրվարի 21-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 2000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 2 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
9.	Մորակտցար	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2027 թվականի փետրվարի 21-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի

		30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 3000 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
10.	Նապաստակ	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 27-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 555 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
11.	Փորսուղ	2026 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 21-ը, բացառությամբ 2026 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 162 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
12.	Քարակզաքիս	2026 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2027 թվականի փետրվարի 7-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 428 հատ, յուրաքանչյուր որսորդ՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
13.	Վայրի խոզ	2026 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 27-ը, (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ 74 հատ, որսորդների յուրաքանչյուր խումբ (4 և ավելի)՝ 1 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում),
14.	Աղվես	2026 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2027 թվականի հունվարի 3-ը (որսի ենթակա ընդհանուր քանակությունը՝ անսահմանափակ, յուրաքանչյուր որսորդ՝ 2 հատից ոչ ավել որս/օրվա ընթացքում):